**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, +374 91 91 26 40, lermontovogjuxapetaran@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

28 ԱՊՐԻԼԻ 2026թվականի N 60

2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք" սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2026 թ-ի փետրվարի 9-ի հ.15-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 26-րդ կետով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 37 հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի հունիսի 07-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար Լերմոնտովո համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար վահանակները՝

1) Լերմոնտովո բնակավայր՝ հին Ակումբի շենքի դիմային հատվածից 1.6 քմ /հասցեն 2փ. թիվ 4/;

2) Անտառաշեն բնակավայր՝ կաթի արտադրամասի շենքի դիմային հատվածից 1.6 քմ /հասցեն 1փ. թիվ 11/:

2.Առանձնացված վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է մեկ A4 չափի 21սմ լայնությամբ, 29.7սմ բարձրությամբ տարածք, հորիզոնական դասավորվածությամբ ընդհանուր 0.06237 քմ մակերեսով՝ համաձայն կից գծագրի:

3.Ուժը կորցրած ճանաչել Լերմոնտովո համայնքի ղեկավարի 18.04.2026 թ-ի թիվ 57 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**